

որոնք Ատանայինն հետ բաղդատուէին : Այս նահանգին ջարդերը շատ ու շատ գլած անցած են այն բոլորը՝ ինչ որ Համիտեան վարչութիւնը այս տեսակին մէջ կազմակերպած է և ինչ որ իր բնութեամբ պիտի մընայ յսխտենական ամօթ մը Օսմ. Պատմութեան :

Համիտեան ջարդերու մեծ մասը, այսպէս ըսուած, ռնէին տեսակ մը կանոնաւոր կազմակերպութիւն. կը խնայուէր ազայոց, կիներուն, հիւանդներուն, և կողպուտի, հրդեհումի և քանդումներու մասին տեսակ մը սեղմում կը դնէին : Ատանայի մէջ ողջ ողջ այրած են հիւանդները և վիրաւորները : Գիւղերու և շրջակայի ազարակներուն, Միսիսի և Համիտիէի գաղաններուն՝ ինչպէս նաև Հասան Պէյլիի (Պաղչէի գաղա) մէջ, իբրև հարստութիւն և կալուած այլևս ոչինչ կը մնայ. կիներէն և հինգ վեց տարեկան տղաքներէն շատեր վիրաւորուած են. անոնք մինչև իսկ առարկայ եղած են ամենաղգոյսի վարմունքներու : Թարսուտի մէջ լսեցի վաթսուոր անցուկ երկու խեղճ պառաւներու գանգատները. անոնք կ'ողբային որ չէր յարգուած նոյնինքն իսլամական օրէնքը՝ որ կեանքը կը ճանչնայ իբր Աստուծոյ պարգեւը, և կիներու պատիւը՝ փատիշահինը, այն [աստիճան՝ որ մարդ ըլլալու համար սարսափ կը զգայի :

Մեր առջև բերին 8-12 տարեկան բռնաբարուած 4 աղջնակներ, զանոնք, ի ներկայութեան էստա Ռէուֆ պէյի (կառավարիչ Մերսինի) և ուրիշ պաշտօնատարներու՝ տարինք իսլամ դայեակի մը մօտ : Տեղեկագիրը ըստ պատշաճի խմբագրուելով պահուած է տեղական իշխանութեանց մօտ : Եղերերգութեան բոլոր ընդարձակութեանը և բոլոր գաղբելի բարբաբոսութեանը մասին գաղափար մը կազմելու համար կը բաւէր տեսնել անթիւ վիրաւորեակները, մանաւանդ խեղճ